

ՔՐԻՍՏՈՍ՝ ՊԱՏԱՐԱԳԵԱՂ ...

«... Նափառապատ սիրով զմեզ զգեստաւորեցեր,
 քուն սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր ...»:

Եղիվարդին, 1963 ին

Խորհուրդ խորին. կը քրքրուայ վանկ առ վանկ,
 Խորհուրդ կտրած այս պարտէզը, խունկ-բուրլառ,
 Որուն սեմին ահա՛ կանգնած բազմավանկ
 Քաղցր ձայն մը կարծես կուլայ բառ առ բառ.
 Քրիստոս՝ պատարագեալ ...

Խորհուրդ խորին. կը հեկեկայ հեռակայ
 Աննիւք մարմին դարձած բլուրն ալ անդին.
 Խորհուրդ եւ լոյս. գէմ կը բռնեն բազմաչեայ
 Սերովբէներ, թառած անոր գագաթին.
 Քրիստոս՝ պատարագեալ ...

Երկինն ամբողջ՝ երկիր իջած ի վերուս,
 Իբր հոգիներ՝ լարուած իննար, մեկուսի՛
 Կը սպասարկեն պատարագին այս անսոս,

Կը հաղորդուին մաքուր արեամբն Յիսուսի.
 Մինչ դպիրներ կը տալերգեն հոգւոց ի գին,
 Նախամասոյց պատարագին երգն յետին.
 Քրիստոս՝ պատարագեալ ...

ՀՄԱՅԵԱԿ ԴՐԱՆԵԱՆ

(Գերսեմանիի պարտէզ, 15 Յունիս 1909)

